ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 339-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԲՋՆԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ <<ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<ա>> ենթակետի՝ <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի բնակչությանը պետության կողմից երաշխավորված /անվճար/ շտապ բժշկական օգնությունը պատշաճ և անխափան կազմակերպելու նպատակով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության շահագործմանը տրամադրել <<Բջնիի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող 2001 թվականի արտադրության *ԳԱԶ 32204* մակնիշի, *198 SU 42* պետհամարանիշի շտապ օգնության ավտոմեքենան:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության և <<Բջնիի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններին օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2015 թվականի մայիսի 4-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2015 թվականի դեկտեմբերի 18
ք. Հրազդան

ԿԱՐԳՈՒԼՈՅԱՆ